



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Երկրագնդի այն տարածքներում ուր առկա է խոնավության զգալի պակաս, մշակվող հողերը ոռոգվում են արհեստական ջրամատակարարմամբ, ինչը նպաստում է ստացվող գյուղատնտեսական արտադրանքի զգալի աճին: Առաջին հայացքից այս դրական գործընթացը այնուամենայնիվ ունի նաև վտանգավոր դրսևորումներ: Էրոզացումից բացի հողը կարող է ենթարկվել նաև **երկրորդային աղակալման**, որը գրեթե անհնար է դարձնում բույսերի հետագա զարգացումն այդ տարածքում:

Ինչ է երկրորդային աղակալումը: Հողատարածքները հաճախ ոռոգվում են ավելի շատ ջրով, քան հողը կարող է պահել իր արմատային շերտում: Այդ ավելցուկ խոնավությունը կուտակվելով իջնում և միախառնվում է հողի խորքում առկա գրունտային ջրերին: Գրունտային ջրերի մակարդակը աստիճանաբար բարձրանում է և մի քանի տարի անց հասնում է հողի մակերեսին: Գրունտային ջրերը իրենց մեջ մեծ քանակությամբ լուծված աղեր են պարունակում և հասնելով հողի մակերեսին սկսում են գոլորշիանալ առաջացնելով աղային կուտակումներ՝ աղուտներ: Այս երևույթը կոչվում է երկրորդային աղակալում: Դրա պատճառը ոռոգման ոչ ձիշտ կազմակերպումն է և հողի ավելի խորը շերտերում հանքային աղերի մեծաքանակ ամկայությունը: Այդպիսի հողերը գյուղատնտեսության համար դառնում են ոչ պիտանի: **Հողերի աղակալումը նույնպես նպաստում է անապատացմանը:**

Ներկայումս ոռոգվող հողատարածքների ընդհանուր մակերեսը ամբողջ աշխարհում կազմում է շուրջ 310 մլն հա, որի մոտ մոտ 30%-ը երկրորդային աղակալած հողեր են: Երկրորդային աղակալման կանխման կարևորագույն միջոցներն են ոռոգելի համակարգերում ջրի չափավորված ծախսի վերահսկումը, հատուկ ջրհեռացման համակարգով հողից խիստ հանքայնացած ջրի հեռացումը, ոռոգման իրականացումը անձրևացիի սարքավորումների միջոցով և կաթիլային ոռոգման համակարգերի կիրառումը:

Հողերի ձահձացումը: Չորային կլիմայով շրջաններում հողերի աղակալումը հաճախ ուղեկցվում է ձահձացմամբ: Հողերի ձահձացումը կապված է տարածքի ջրային ռեժիմի՝ երկարատև և մշտական զերխոնավացման և ստորերկրյա ջրերի մակարդակի բարձրացման հետ: Հաճախ ձահձացումը զարգանում է նաև ջրային ավազաններն հարող տարածքներում և կարող է գրավել հարթավայրային մեծ տարածքներ: Ճահձիճների ընդարձակումը կանխելու համար կառուցվում են ջրհեռացման համակարգեր:

Հողերի հյուծումը: Էրոզիայից և ոչ ձիշտ կազմակերպված ոռոգումից հետո հողերի հյուծումը նույնպես մեծ վնաս է հասցնում հողային պաշարներին: Հյուծ-

ման պատճառները մի քանիսն են: Դա և՛ բերքի հետ հողից սննդանյութերի հեռացումն է հումուսի աղքատացումն ու կորուստը, գերարածեցումը, որն ուղեկցվում է բուսածածկի վերացմամբ, և՛ ջրային ռեժիմի խախտումն ու աղակալումը: Հյուծվելու արդյունքում հողում սկսվում են անապատացման գործընթացները:

Հողերի օտարումը: Հողերի օտարումը դա, հողի օգտագործումն է դրա գործառույթի հետ չկապված նպատակներով: Մարդու տնտեսական գործունեությանը պայմանավորված հողերի օտարումը անխուսափելի երևույթ է: Օտարման անհրաժեշտությունը պայմանավորված է օգտակար հանածոների արդյունահանման, արդյունաբերական, քաղաքաշինության, ջրաէներգետիկ և այլ նպատակներով իրականացվող աշխատանքներ իրականացնելիս:

Հողերի աղտոտումը: Մարդու տնտեսական գործունեության հետևանքով հողերը կարող են աղտոտվել՝

- արդյունաբերական արտադրական թափոններով, կեղտաջրերի և մթնոլորտ արձակված պինդ նյութերի ձևով (ցեմենտի արտադրություն),
- պարարտանյութերի օգտագործմամբ, հողի քիմիական կազմի և պարարտանյութերի ոչ ճիշտ ընտրության կամ քանակի չարաշահման ձևով.
- թունաքիմիկատներով (պեստիցիդներով), բույսերի, այգիների վնասատուների դեմ պայքարի ժամանակ,
- քիմիական և ռադիոակտիվ նյութերով, տեխնոլոգիական գործընթացների խախտման կամ տարերային աղետների ժամանակ.
- ռազմական գործողությունների ժամանակ վառելիքի արտահոսքի, ծանր տեխնիկայի շարժման, պայթուցիկ նյութերի կիրառման ձևով: